Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 750 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐՁԱԳԱՆՔ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 8000 շահառույի հումանիտար աջակցության ցուցաբերում՝ առաջնային կարիքները հոգալու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Մոնակոյի Կարմիր խաչ և Հայկական կարմիր խաչի կայքի առցանց նվիրատվության շրջանակներում
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	20,000,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 8000 շահառու: Ծրագրի թիրախ խումբը վերջնական ձևավորվելու է պատկան լիազոր մարմինների և տեղական իշխանությունների աշխատակազմերի հետ համագործակցության արդյունքում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հիգիենիկ պարագաների ձեռքբերում և տրամադրում ու արկղերի ձեռքբերում՝ 20,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հիգիենիկ պարագաների և արկղերի ձեռքբերում՝ 20,000,000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզպետի աշխատակազմերի և համայնքապետարանների հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև Երևանի քաղաքապետի աշխատակազմի և համայնքապետարանի հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ավարտական հաշվետվություններ են ներկայացվելու Մոնակոյի Կարմիր խաչին: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեն իրականացնելու է գործունեության անմիջական վերահսկումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ